

ԲԱԺԱՆՈ՞՞՞ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պաշտպանի համար
 Տարեկան 12 Պր.
 Վեցամսեայ 6 »
 Առաստախնակի համար
 Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Անկերիկայի համար
 Տարեկան 3 ՏՐԼ.
 Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԻՒԿ ԿՃԱՐԵԼԻ

Իրականացնակ տղոր առաջին
 կտեսիկ համար 40 սանթիմ
 է. իսկ վերջին կտեսիկ համար
 20 սանթիմ է. կտեսիկ
 սուկի անգամներու համար
 20 Օլլ զեղջ կըլլայ:

Պաշտպանի համար ձեռքի
)(15 ՍԱՆԹԻՄ)(
 Վստահայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇՆՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Никола Бакърджиевъ

Նախակ եւ դրակ դրկեյ
 Խմբագրութեան հասցիկն

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна

Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Իրականացնակ տղոր

Առաստախնակի համար ձեռքի
)(20 ՍԱՆԹԻՄ)(

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՉԻՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԿՆԵՐՈՒՆ

Շարժումի տարեշրջանին 10րդ ա-
 միսն է որ կը լրանայ, ու զեռ բազ-
 մաթիւ բաժանորդներ սանդիմ յը
 իսկ չեն բարեհաճած վճարելու: Այդ
 բաժանորդները արդ արանալու ոչ մէկ
 միջոց ունին, որովհետեւ իրենց յո-
 ժարութեամբ են ստացած:

Խմբագիր մը պարտաւոր չէ ամէն
 ժամանակ իր բաժանորդներուն յի-
 չեցնելու իրենց պարտքը: Քանի որ
 թերթը կը ստանան պէտք է որ իրենց
 բաժանորդին ալ վճարեն: Պարտաճանա-
 չութեան ամենատարրական գիտակ-
 ցութիւնը ունեցող անձը կը զգայ թէ՛
 թերթը կանխիկ ծախքեր ունի, զորս
 հայթայթելու համար, ժիակ աղբիւրը
 բաժանորդներն են: Անտարբերութեւ
 հանդէպ վարուելու կերպը գիտենք,
 բայց զեռ քիչ մըն ալ կը սպասենք,
 յուսալով որ, այլեւս բաժանորդները
 պիտի ըմբռնեն իմբագրութեանս
 դրամի ստիպողական պէտքը, քանի
 որ հիմայ թուրքերէն յանելուած հա-
 նելու համար, արդէն հարկադրուած
 ենք նոր ծախքերու մէջ մտնել:

Իսկ նոր բաժանորդ գրուողներուն
 համար միանգամ ընդ միշտ կը յայ-
 տարարենք թէ, պէտք է իրենց հաս-
 ցէին հետ թերթին բաժանորդին ալ
 զրկեն, առանց որուն թերթը չու-
 դարկուիր:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Պարսից վերջին ճահերը առ-
 հասարակ լաւ են վերաբերվել
 գէպի հայերը: Հայը այն տեղ
 իր ներքին գործերը վարելու
 մէջ անհամեմատաբար աւելի ա-
 զատ է եղել, քան Ռուսաստանում
 և Տաճկաստանում. չը նայած որ
 այս երկու երկիրներին կառա-
 վարութիւնները աւելի կանոնա-
 տօր կազմակերպութիւն ունեն:

Ճիշդ է, երբեմն պարսիկ մոլե-
 անդ ամբոխը, որ և է յիմար
 պատճառով, անձնատուր եղած
 իր կատաղի մոլեանդութեան
 արամագրվել է փորձանքներ
 բերել տեղական հայ հասարա-
 կութեան զլխին, բայց նասրէդ-
 դին և Մուղղաֆէրէդդին ճահե-
 րը կարուկ միջոցներ են ձեռք
 առել ամբոխը սահմանաբերելու և
 հայերին պաշտպանելու համար...

Հայկական կոտորածներին մի-
 ջոցին պարսից հիւպատոսները
 և զեպոսներ ամենաեռանդուն
 կերպով պաշտպանեցին հայերին
 կարողած թիւրքերի դէմ, թէ
 Պոլսում և թէ գաւառներում, ա-
 ւելի եռանդով, քան երոպական
 պետութիւնների ներկայացու-
 ցիչները:

Պարսից կառավարութեան այս
 հայասիրութիւնը Սուլթան Հա-
 միտին բոլորովին հաճելի չէր:
 Նա շատ փորձեր արեց ճահերի
 արամագրութիւնը դէպի հայերը
 փոխել, նոյն իսկ կրօնական եղ-
 բայութիւնը մէջ տեղ գցելով,
 բայց յաջողութիւն չունեցաւ:

Մի ժամանակ հայերիս պատճա-
 ռով այդ երկու մահմետական պե-
 տութիւնների յարաբերութիւն-
 ները շատ լարվեցին: Վերջերս
 Համիտ իր շար նպատակին հաս-
 նելու յոյսը դրել էր ճահի Պոլիս
 գալու և անձամբ տեսակցութիւն
 ունենալու վրայ: Այդ էլ եղաւ.
 բայց Համիտ իր շար նպատակին
 չը հասաւ: ճահի վերջին հրովար-
 տակը հայերի մասին, փաստ է
 որ նա փոխանակ հայերին սեղ-
 մելու, ընդհակառակը աւելի լայն
 իրաւունքներ է տալիս և յառաջ-
 գիւնելու համար աւելի լայն ազա-
 տութիւն:

Ենթագրել թէ ճահը հայերի
 հետ այդպէս է վարվում միայն
 Սուլթանից դժգոհ լինելու պատ-
 ճառով, ինչպէս կարծում են Եւ-
 րոպայում, եթէ ոչ բոլորովին
 սխալ, գոնէ շատ միակողմանի
 կը լինի:

Պարսից ճահերը եթէ իրենց
 երկրի շահերը ըմբռնում են—որի
 մէջ առայժմ չենք կասկածում—
 ստիպված են իրենց հպատակ
 հայերին սիրաշահել. որովհե-
 տեւ Պարսկաստանի ամենակուլ-
 տուրական տարրը հայն է, և
 Պարսկաստանը միայն հայերի
 միջոցով պէտք է կարողանայ
 օտարամուտ տարրին գիմագրել,
 երկրի վաճառականութիւնը զար-
 գացնել, ու ոչ միայն իր հարստու-
 թիւնը իր մէջ պահել, այլ և
 օտար երկրներից հարստութիւն
 քաշել:

Հայը Պարսկաստանի համար օգ-

տակար է և լայն քաղաքակրթու-
 թեան տեսակէտով, որովհետեւ նա
 միայն կարող է բարեկամ միջ-
 նորդ լինել պարսիկ ժողովրդի
 և արեւմտեան քաղաքակրթ ազ-
 գերի միջեւ:

Հայերի հետ սիրով վարվելը,
 յառաջադիմելու ազատութիւն
 տալը վերջին ճահերի ամենա-
 խելացի և արդիւնաւէտ ներքին
 քաղաքականութիւնն է... ու
 պէտք է որ մշտական լինի:

Սուլթանը թող օրինակ լինի
 պարսիկ կայսրներին. Սուլթանի
 հայատեսաց քաղաքականութիւնը
 թուրքիան աւերակ դարձրեց, և
 որչափ էլ որ Սուլթանները ար-
 տաքին փայլով գեր խաղան քա-
 ղաքական աշխարհում, յամենայն
 գէպս թուրքիան պիտի բոլորու-
 վին աւերվի շնորհիւ իր հայատե-
 սաց քաղաքականութեան...

Եթէ հրովարտակը ճիշդ է,
 եթէ իսկապէս ճահը հայերին
 այդչափ ազատութիւն է տալիս,
 Պարսկաստանի հայերը իրենց
 բոլոր ճիգերը պէտք է թափեն
 օգտվելու ազատամիտ կայսեր
 բարի տրամագրութիւններից,
 տաճ ազատութիւնից և յառա-
 ջադիմեն:

Այդ հրովարտակի մէջ այն-
 պիտի արտօնութիւններ կան, որ
 հայերը միայն եւրոպայում են
 կարողանում վայելել: ճահի
 պարսկահայերին տաճ արտօնու-
 թիւնները օգուաներ կարող են
 բերել ոչ միայն պարսկահայերին,
 այլ և տաճկահային ու ռուսա-
 հային, եւ յուսանք ու հաւա-
 տանք թէ Պարսկաստանի հայերը
 պէտք է կարողանան դրապէս
 օգտվել իրենց կայսեր բարի
 տրամագրութիւններից և կաշ-
 խատեն պարսիկ ժողովրդին էլ,
 պետութեան էլ օգտակար լի-
 նել:

Ի հարկէ հասարակ հայ ժողո-
 վուրդը այս բարդ խնդիրները
 ըմբռնելու կարողութիւնը չունի,
 նա նոյնպէս անկարող է բարե-
 միտ կայսեր նուիրած արտօնու-
 թիւններին յաբմար ծրագիր
 կազմել և որոշ ուղղութեամբ

առաջ գնալ: Այդ պարտակա-
 կանութիւնը ընկնում է Պարս-
 կաստանում ապրող զարգացած և
 յառաջագէտ տարրի, մանաւանդ
 երիտասարդութեան վրայ:

Մեր Ռուսաստանի և Տաճկաս-
 տանի երիտասարդութիւնը իր
 անգործունէութիւնը, կամ աւե-
 լի ճիշդը ասել թմրածութիւնը
 արգարացնում է այդ երկրների
 կաշկանդող և ճնշող պայմանները
 մատնացոյց անելով: Պարսկաս-
 տանում այդ պայմանները առաջ
 էլ գոյութիւն չունէին գրեթէ,
 իսկ վերջին հրովարտակով եղած
 փոքրիկ խոչնդոտներն էլ վե-
 րանում են: Եթէ Պարսկաստա-
 նում ապրող հայ երիտասարդու-
 թիւնը թերանայ իր այդ պար-
 տականութեան մէջ՝ նա ոճիր
 պէտք է գործած լինի:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 25 Նոյեմբեր

«Նունի հետ ընկերացի, բայց
 փայտը ձեռքէդ վար մի դներ. ոչ
 կըսէ ժողովրդական առածը: Կու-
 զե՞ս որ շունը քեզի բարեկամ
 մնայ՝ ձեռքէ, միշտ ձեռքէ, կամ
 միշտ սարսափի տակ պահէ:

Ես ոչ որսորդ եմ, ոչ ալ շուն
 մարդու, բայց ռամկական կոպիտ
 փիլիսոփայական «խոհերը մըտ-
 քիս հորիզոնը ալեկոծեցին»,
 (ինչպէս կըսեն մեր հոսհոս գրա-
 գէտները), վերջին շաբթուս մէջ
 պատահած դէպքի մը առթիւ:

Տեղական թերթերը աննշան
 լուր մը հաղորդեցին, որը՝ սո-
 վորական պարագանելու մէջ՝
 երբէք ուշագրութիւնս չի պիտի
 գրաւէր, բայց այս անգամ աչքի
 զարկաւ, շնորհիւ քանի մը նա-
 խընթաց հանգամանքներու:

«Ամերիկեան գեսպանատան
 «այսինչ» անուն պաշտօնեան ե-
 րէկ (ամսոյս 24ին) ամերիկեան
 հիւպատոսի պաշտօնով Խարբերգ
 մեկնեցաւ Տրապիզոնի վրայով:
 Ասկէ ալ աննշան լուր մը կըր-
 նայ ըլլալ:

Ամէն շաբթ կը հանդիպիք
 մեկնում կամ նոր նշանակում

յայտարարող լուրերու : Բայց այս խնդրին մէջ պայմանները քիչ մը տարբեր են :

Կաղիցի գրապէս Էմմոնա Փազի, իր «Ներկայ Թուրքերը կամ Մեծ Ղարակէօզը» անուն գրքի 173 երեսի մէջ Բարասօքս մը կըսէ . . . «Ռօպէրթ քօլէժը, Ամերիկեան կառի աղատական այս մեքենան, որ Վասիտրի Պէպէթի բարձունքէն ստեղծեց ներկայ Պոլկապան» . . .

Ասիկայ յիշուի տարօրինակ միտք մըն է, չափազանց զաւարական : Ենայդ մտքի հետ համաձայն չեմ : Պոլկապան ստեղծուեցաւ տնտեսական քայքայումի, հարկերուն ծանրութեան, ալպաններու խժոժութեանց, թրքական անպոչանգլուխ տնիշխանութեան շնորհիւ :

Գարոցները, լուսաւորութիւնը ուրեմն և Ռօպէրթ Քօլլէժը ունեցան իրենց դերը, բայց աս ալ գիւնք մըն էր և ոչ ստեղծող պատճառ մը :

Տարբերութիւնը մեծ է. ես նի թաղաշտ վարդապետութեան կը հետևեմ, իսկ այդ միտքը զուտ գաղափարական է :

Անատոլիի և հայկական նահանգներու մէջ տարածուած ամէն կրօնական ցեղերէն համեմատաբար ամենէն օգտակարը եղած են ամերիկեանները իրենց դպրոցներով և անհատներու ցոյցած պաշտպանութիւնով :

Մարզուանի, Խարբերդի, Վանի, Ատանայի, Այնթափի ամերիկեան դպրոցները շատ մը գործիչներ, օրինական և յեղափոխական մատակարարած են

մեր բազմաշարքար Յորժողովրդին :

Ամերիկեան կառավարութիւնը միակն է եղած որ Թուրքիոյ վերաբերութեամբ չէ հետևած ծեր Եւրոպայի ծեր քաղաքականութեան :

«Շունը միշտ ծեծեր է որ իրեն բարեկամ մնայ» : Բանի անգամներ Իլմիրի, Մերսինի կամ Իսկէնտէրուի առաջ ցցուեր են Ամերիկեան մարտանաւերը . քանի անգամ սպառնացին իրենց երկաթէ բերաններէն հարուստ ուսուցիչներ, տուններն ու բերդերը զենի հետ հաւասարեցնել, եթէ այս կամ այն ձերբակալուած միտինարը կամ պատուելին աչառ շարձակուելի, կամ պահանջուած տուգանքը չի տրուի :

Ասոր ալ «Բէնթոն» անուն զրահաօրն է եկեր ցցուեր Իլմիրի ջրերու մէջ, իր հրէշտար բերանները դարձուցեր թուրքի երկրորդ շէն քաղաքին վրայ :

Վայրկեան մը և թերեւս վաւոզի փայլակները ցայտէին, թնդանթներու խոշոր ուսուցիչը պայթէին Իլմիրի և շրջականներու վրայ, որոնք ուկայծակը լուրէր մարդկութեան երկրորդ Աստուծութեան թորերէն . . . բայց շունը սօփան տեսնելուն պէս, պոչը քաշեց, ականջները կախեց ու քծնիլ սկսաւ հպարտ Եանքի ռոքերուն առջեւ :

Ամերիկա բազմաթիւ հայեր կան, որոնք Ամերիկա երթալով հպատակ դարձեր են, անցագիր առեր և հայրենիք վերադարձեր են : Մեծ մասը Խարբերդի են և մինչեւ օրս Խարբերդը Ամե-

րիկեան հիւպատոս չունէր . Ամերիկեան գեռամիս մը առաջ Սուլթանի Յաճագոյն Կուռնէն պահանջեց ստորագրել Խարբերդի հիւպատոսին հաստատման թուղթերը : Երևազը ալեկոծուեցաւ, «Ինչպէս ամերիկեան հիւպատոս հաստատել հոն», ուր այդչափ ամերիկեան հպատակ հայեր կան, և որոնց թիւը վաղը պիտի արագաբար աճի : «Ո՛չ, չենք հաստատեր», ըսաւ Համիտ : «Չես հաստատեր, պատասխանեց Եանքին, իսկ ես իմ հպատակներու և զպրոցներս չեմ թողուր անպաշտպան», ու եկաւ Բէնթոնքի զրահաօրը, ցցուեցաւ Իլմիրի առաջ : Շուն ստորագրէ ըսաւ տեղւոյս Ամերիկեան գեռապանը, եթէ ոչ Իլմիրը հողի հետ կը հաւասարեցնեմ : Սօփա կայ օրթան, գլուխը ինչ քարի զարնէ թուրք կառավարութիւնը, ստորագրեց հիւպատոսը գնաց իր պաշտօնատեղին :

Ամերիկահպատակ մեր Խարբերդի աղակերպներու աչքը լոյս, բաւական խոշորկէկ մխիթարութիւն մը և պաշտպանութիւն մը եղաւ իրենց :

«Շունի հետ ընկերացիր փայտը ձեռքէդ վար մի դնե՛ր», ԲԱԺ

ԿԱՍԻՏԱ ԵՒ ՊԻՂՍՈՍ (ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ)

(Շար. Ասիտոյ քիւիէն)

Քանի մը օր վերջը, Պիղատոս եւ Կլաւտիա Հոովմ մեկնեցան. ծպտեալ Օսթիի ցամաքը իջան եւ աշխարհի մայրաքաղաքին բոլոր տօներուն

մասնակցելով աշխարհիկ ընկերութիւնը շտապեցին իրենց արեւելեան ճոխութեամբ :

Կլաւտիան իր կապոյտ ասուէ ոսկեզր շրջազգեստով եւ մերկ ուսերուն վրայ ալեւածան մազերով ամէնք կը հիացնէր : Չայն անսնողները կամ հիացումով կը բացագանչէին. կամ թէ լոկ' կը տեսնային այնքան գեղեցիկ կնոջ մը ամուսինը ըլլալու բաղդին արժանանալ :

Գեղանի Կլաւտիան ոչ հպարտութեան եւ ոչ ալ պչրանքի համար այսպէս կերուեալ, այլ իր պաշտած Պիղատոսին հաճելի ըլլալու, զոր միշտ կը սիրէր եւ, ամէն գնով, կուզէր զայն յուսահատութեան փրկել :

Ափսո՛ս, բոլոր ճիպերը ապարդիւն կը մնային. ո՛չ ասպաքէն իր բոլոր էութեամբ զօրազգ ամուսնոյն համար կենդանի յանդիմանութիւն մըն էր : Պիղատոս յաճախ ուժգնօրէն երեսը կը զարձնէր իրմէ, կարծես ան զինքը շրջապատողներուն մէջ ամենէն աւելի զարհուրանք աղղած ըլլար :

Գողգոթայի ողբերգութեան յետոյ երեք տարիներ սահած էին. Նազովրեցոյն արեւը սոսաւորուիլ ցողի նման ամէն կողմ կը բուսցնէր Չերմեռանդ քրիստոնեաներ որոնք կը քարոզէին Քրիստոսի վարդապետութիւնը, կը դրուատէին անոր առաքինութիւնները եւ ամէն տեղ կողբային անոր ստնջանքներն ու մահը : Նոյնիսկ իր աշակերտները Հրէաստանը թողով տարածուեցան աշխարհի վրայ՝ որոնցմէ մէկ քանին զազին Հոովմ :

Պիղատոս տեսաւ զանոնք, լսեց անոնց քարոզը : Նազովրեցի չարչարանքին նկարագրութիւնը, իր վատի մը պէս, անիծուելու եւ սոսկուէն հեծեց : Երուսաղէմէն աւելի անհանգիստ զգաց ինքզինքը եւ ճանչցուել վախնալով հեռացաւ Գաղիլիա : Կլաւտիա իր անձնուրէն ընկերուհիին, անտրտունջ հետեւեցաւ իրեն :

Պիղատոս այս նուազ քաղաքակիրթ երկրին մէջ կերպազէր ազատ եւ մտքուած սպրիլ : Լոյսը բացուելուն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԱՆԱԺ ԹՈՂՆԻԿ

95 Թւականի յունվարին Ռուսաստանի, Պարսկաստանի, Տաճկաստանի և Եւրոպայի ամէն անկիւններէն հայ յեղափոխականները ժողովել էին Կովկասի Ն. քաղաքը իտրուլութէ ինչ դիրք պէտք է բռնել զէպի թուրք կառավարութիւնը : Այդ ժողովը հետեւանք էր Սասունի կոտորածի եւ Եւրոպական պետութիւնների կողմից այդ կոտորածի բուն պատճառները քննելու համար կազմված յանձնաժողովի :

Եւրոպական երեք պետութիւնների միջամտութիւնը մեր լաւատեսների մէջ վառ յոյս էր զարթեցրել և զրանք համոզված էին թէ վերջապէս հայոց հարցը յաջող կերպով պէտք է լուծվի :

Լաւատեսները այնքան մեծ հաւատ ունէին իրենց յոյսերի իրականանալու մէջ, որ մի տեսակ բարոյական ճնշում էին գործ գնում յեղափոխական մտքիներին վրա առժամայ զործադրող անկուռ :

Լաւատեսներին միացել էր եւ բողոքողին անտարբեր հայ տարրը : Յե-

ղափոխական մտքիները զրուցելու շատ փափուկ էր, եւ նրանցից մէկի կարեւոր անդամները ժողովել էին այդ փափուկ զրուցելուց զուրս գալու միջոցներ որոնելու և որոշումներ տալու համար :

Այդ յեղափոխական համախմբումը ինքնատիւնքեան շատ հրապուրիչ ու հետաքրքիր էր, աշխարհի ամեն ծայրերից հաւաքվել էին հայ երիտասարդութեան եռանդի, ուժի, մտքի եւ կորովի ծաղիկները, իրենց հայրենիքի ապագայի մասին լրջօրէն մտածելու : Հետաքրքիր ու հրապուրիչ էր եւ այդ համախմբումին մասնակցող ամեն մի անդամը, մասնաւանդ նրանց համար, որոնք դեռ մի քանի տասնեակ, զանազան դիրքի, ընդունակութեան, մասնազուլութեան պատկանող յեղափոխականների համախմբումը չէր տեսել :

Ինձ համար ամենից հետաքրքիրն էր մի երիտասարդ կուսակից յեղափոխական. նա համալսարանի դրական գիտութիւնների բաժինը ասարակուց յետոյ, իսկոյն կուսակիցն էր դարձել, հաւատացած լինելով որ իր հոգեւորական աւելի լայն ու ազատ միջոցներ պէտք է ունենայ իր ժողովրդին ծառայելու, նրա ցտեսը զարմանելու գործին աջակցելու :

Եւս առաւել հետաքրքիր էր, որովհետեւ բողոքողին նրան չէի ճանաչում, եւ լսել էի որ հալածվում էր կրօնական բարձր իշխանութիւնից, նոյնիսկ երբեմնի ազատական քարոզիչ Սրիմեանի օրով, որը ինզճ երիտասարդին, չը նայելով նրա տկարութեան, ցուրտ ձմրան դուրս էր արել հայոց Մայր Աթոռից, ուր դարբնով ձերակերութիւն են անում սզէտ ու անբարոյական կախկոպոսները եւ վարդապետները :

Եւ հայոց Մայր Աթոռից, հայոց իւրյիլ յորջոզված կաթողիկոսից հալածված այդ գիտնական, հայրենասէր արեզան կատարելապէս իր բունը եւ ձագերը կորցրած մի վատնած քաջիկ էր դարձել, գլուխը գնելու տեղ չունէր, Հանգիստ կեանք չէր սիրում, իր ամբողջ էութեամբ յեղափոխական էր, բայց սարսախելի տկարութիւնը թոյլ չէր սալիս նրան բողոքողին նետվելու բուն յեղափոխական արկածալի եւ դժնգակ կեանքի մէջ . . .

Վարանած թոնջիկը, այսուհետեւ այդպէս պէտք է կոչուէր մեր արեւային, իմ մտածութեան առարկան էր դարձել, գեռ հեռուից նրա մասին լսելով մի տեսակ որոջ կերպով պատկերացրել էի ինձ, զանազան ֆիզիքական, բարոյական եւ մտաւոր առաւելութիւններ յստկացնելով նրան, Հիմա, երբ նա մեզ մօտ էր, այլ

եւս հետաքրքրութեան չափ չը կար, անհամբեր սպասում էի մի յարմար առիթի որ կարողանայի տեսնել :

Այդ առիթը չուշացաւ : Հաւաքված էինք մի տեղ եւ սպասում էինք վարանած թոնջիկին, վերջապէս հասնելու էի փափաղիս, հետաքրքրութիւնս իր բաւականութիւնը ստանալու վրա էր Բայց Թոնջիկը ուշանում էր, Յանկարծ ընկերներիցս մէկը՝ դիմեց ինձ .

— Սուրէն, վարանած թոնջիկը ուշացաւ, դու շատ էր ուղում տեսնել նրան, այսինչ տունն է ապրում, պարտէզի մէջ, եթէ ուղում ես մի կատք նստի, գնա տես ի՞նչից այս չափ ուշացաւ, գուցէ կրկին տկարութիւնը սաստկացած լինի եւ չը կարողանայ գալ :

Առանց երկար ու բարակ մտածելու դուրս եկայ մեր ժողովատեղից, Յունվարի ցուրտ երկոյ էր եւ սարսափելի քամի. կառք վարձեցի ու ճամբայ ընկայ դէպի վարանած թոնջիկի տունը, որը գտնվում էր քաղաքի միւս ծայրում, մեր ժողովատեղից երեք քիլոմէթր հեռաւորութեան վրա :

Վերջապէս հասայ, մտայ բակը : Ահադին պարտէզի մի անկիւնում բարձրանում էր մի համեստ, Եւրո-

պէս անտանները կերթար զազաններ որսալու եւ միմիայն երեկոյին սաստիկ յոգնած կը վերադառնար, ու խորունկ քնով մը քնանալով իր սրտին անձկութիւնները կը մոռնար:

Կլաւտիան ամուսնոյն երկարատեւ բացակայութեան միջոցին շարունակ կարտասուէր, որովհետեւ կը զգար թէ սէրը քիչ քիչ Պիղատոսի սրտէն կանհտէր:

Բայց ի՞նչ ընէր զայն վերստին արծարծելու համար, որպէս զի դարձեալ ուրախ եւ երջանիկ օրեր վայելէր, որոնք այնքան շուտով թռան...

Աւագ, սէրը ինչպէս գետը չի վերադառնար իր ահունքը: Կլաւտիան լուրջ ճիգերը ապարդիւն մնացին, ամէն ինչ վերջացած էր...

Արդէն երկու տարի էր որ Գաղղիա ապաստանած էին, երբ Պիղատոս իրիկուն մը որսէ դարձած միջոցին կարծեց թէ հետուն, ճամբուն եղբորը անկուած խաչ մը նշմարեց: Սովորականէն աւելի յոգնած տուն եկաւ եւ չը պատասխանեց Կլաւտիայի սիրալիր կերպով իրեն ուղղած հարցումներուն: Գիշերը սաստիկ ջերմէ մը բռնուեցաւ եւ իր զանազանքներուն մէջ տեսաւ Մեծ Նազովրեցիին որ իր առնին կը ներկայանար, Գողգոթայ կը բարձրանար եւ իր աչքերուն առջեւ հոգին կաւանդէր Հոովմայիցի, Գաղղիացի, Յոյն, փրկիչիցի եւ Փոկիացի, ամէնքն ալ զայն կը պահանջէին իր անունով գործուած աստուածապանութեան վրէժը լուծելու համար:

Այս յուզումներուն մէջ մահը միայն կը մտար իրեն. ու իր փրկութիւնը իր անձնուէր կնոջը յարատեւ խնամքներուն միայն կը պարտէր:

Երբ Պիղատոս անողութիւնը գտաւ, իսկոյն որոշեց մեկնել աւելի անմատչելի ապաստան մը փնտրելու համար: Որովհետեւ Գաղղիան այլեւս իրեն այնքան ապահով չէր երեւ-

նար, քանի որ Նազովրեցիի վարձագետութիւնը կսպանար հոն ալ թափանցել: Վերջապէս որոշեց Հելվէտիոյ մէջ ապրել. այս երկիրը իրեն հաճելի կը թուէր. որովհետեւ կը յուսար թէ՛ գէթ հոն ապահով պիտի ըլլայ: Ո՞վ պիտի գար զինքը փնտրելու այն խոր հովիտներու մէջ, որոնք բնորոշակ լեռնաշղթաներու մէջ կորսուած էին: Իսկապէս հոն պիտի գտնէր ազատ ապաստան մը, բոլոր աղետարեր յայտնութեանց զէմ:

ՎԱՐԴԱՆՈՒԾ

(Շարունակելի)

Ք Ի Կ Է Ր Յ Ո Ւ Մ Ա Ւ Մ

Քրիւկէր՝ Եւրոպական էն մեծ հասարակապետութեան դիւանագետներէն ու նախագահէն յոյս կտորած՝ Գերմանիա անցաւ, յուսալով որ հոն, իրեն պատմական հեռագիր պարտող Վիլհելմ կայսրը զրկարաց զինքը պիտի ընդունի եւ չժքաղգ թրանսպարէ Անգլիոյ ճիրաններէն ազատելու ճամբայ մը պիտի ցուցնէ: Սակայն մեծ յուսախաբանութիւն: Քէօլնի մէջ ալ Քրիւկէր գերման քաղաքացիներէն, ուսանողներէն մեծ ընդունելութիւն գտաւ, բայց Վիլհելմ, երկրորդ պատմական հեռագրով մը, բաւական կտրուկ կերպով, կրկին կը ցաւ իմքը մէջ խոթելով, ծանոյց թէ անկարող է առայժմ զինքը ընդունիլ:

Ու Քրիւկէր կրկին լացաւ... Երբայցի աստուածավախ ծերունիներուն պէս: Դժբաղդ երկրին դժբախտ նախագահը, իր բոլոր յոյսերուն մէջ խորտակուած մեկնեցաւ Հոլանտա, յուսալով որ անկից պիտի կրնայ

աշխարհիս դիւանագետներու և վեհապետներու գուլթը շարժել:

Սակայն ի՞նչ կրնայ ընել փոքրիկ Հոլանտան իր գեռառի թագուհիով միասին, որուն խելքը հիմայ թերեւս իր նշանածին շուրջը կը դառնայ:

Ո Ղ Ի Ն Չ :

«Շարժում», արգէն սկիզբէն, իր մէկ աշխատակցին միջոցաւ կարծիք յայտնած էր թէ՛ Քրիւկէր կառավարութիւններու քով յաջողութիւն չի պիտի ունենայ, թէեւ Եւրոպական հասարակութեան գաղափարական և սրտի տէր մասը համակրական մեծ ցոյցեր պիտի ընէ իրեն:

Այսօր այդ գուշակութիւնը իրողութիւն մըն է. Քրիւկէր ֆրանսական կառավարութեան յուսատու պատասխան մը չստացաւ, իսկ Գերմանիոյ կայսրէն, որուն վրայ շատ մեծ յոյսեր ունէր, նոյնիսկ ընդունելի մերժուեցաւ. լերկ ցաւակցութեամբ մը համեմտած՝ որով միշտ ճամբու կը գրուին աշխարհիս բոլոր դժբաղդները:

Գերման կայսեր մեթոդական պատասխանը Քրիւկէրը ընդունելու մասին, Եւրոպական մամուլին մէջ խոշոր նւթ մը դարձած է, ինչպէս «Գաղղիաներէն» ըլլալով ամէն մէկ բան:

Պրանսական լրագիրները նուստացուցիչ ամականներու տարափով մը կը յարձակին Վիլհելմի վրայ՝ վերջիջելով տարիներ առաջ. Անգլիոյ հակառակ, Քրիւկէրի ուղղած քաջաբերական հեռագիրը:

մահ լինէի:

— Բայց հայր սուրբ, եթէ այդքան տկար էք, ի՞նչի էք դուրս գալիս, աւելի լաւ է մնացէք տունը:

— Չէ, անկարող եմ մնալ. գիւրբը երկար է գրգռվել չեմ կարողանում, ոչ գրել եւ ոչ կարդալ: Բոլորովին միայնակ տանջվում եմ, Ընկերների մէջ ինձ լաւ եմ զգում. մանաւանդ որ այսօրայն համարժեք մը չստանալով ինչ է, ես էլ մի երկու հարցեր ունեմ պաշտպանելու: Լաւ է որ դուք եկաք. ուղում էի ձեզ հետ Միտլբանի մասին խօսել. լաւ է ինչ համեմատ գուրք էլ միութեան կուսակից էք. ճիշդ է:

— Այո, եղբւր իմ պատասխանը: Ուրեմն ինձ հետ միասին կը պաշտպանէք այդ առաջարկը:

— Այո, եւ մեծ ուրախութեամբ: Վարանած թոշնիկի աչքերը մի արտակարգ ուրախութեամբ փայլեցին: Եւ նա ոգեւորված շարունակեց:

— Գիտէք, ճշմարիտ ինձ համար շատ զարմանալի է թուում որ այդ միութիւնը չէ կայանում. արդեօք իսկապէս արմատական պատճառներ կան չը միանալու, թէ ես եւ փոստատարութիւնը մեծ զեր են խաղում:

— Երկուսը միասին:

— Բայց ինչպէս կարելի է այդ խոշոր գոտիները մէջտեղից վերցնել:

— Մի միջոցով երկու կուսակցու-

Անգլիական մամուլը հրճուանքով կը շեշտէ Վիլհելմի միութեամբ և կը յայտարարէ թէ՛ այդ մերժումով Պրանսա պիտի զգայ թէ ինք միայնակ Եւրոպա չի կազմեր:

Վիլհելմ կայսեր հայրենակից թերթերն ալ իրենց կայսերառած այս քայլին կը հաւանին, Գերմանիոյ շահերը պաշտպանած ըլլալու պատճառաբանութիւնով, և ձեռքերին կը լուան քանի մը անուշիկ խօսքեր նետելով «քաջ, հերոս» Պօէրներու հասցէին:

Եւ, զժբախտ Քրիւկէր լացով մեկնեցաւ հոն, ուր տարի մը առաջ, Չարին առաջարկութեամբ, «Խաղաղութեան ժողով» կազմուած էր և միջազգային իրաւարար առեանի մը ստեղծուելը որոշուած...

Այդ առեանը կարծեմ արդէն կազմուած է. գոնէ միանայի պաշտօնական թերթը կը հրատարակէ թէ՛ Պրանսա իր իրաւարար անդամները արգէն ընտրած է:

Եւրոպական թերթերը այդ յայտարարութիւնն ալ կը կապեն Քրիւկէրի հետ, գուշակութիւններով միասին:

Մենք համոզուած ենք թէ՛ Քրիւկէր ինքն ալ չի հաւատար Եւրոպայի աշխարհային թեան, քանի որ Լուպէի հետ ունեցած տեսակցութեան միջոցին արգէն յայտնած էր որ, իր յոյսը Աստուծոյ վրայ դրած է:

Մարդոցմէ յոյսը կտրողները միայն յոյսերին Աստուծոյ կուղղեն: Եւ Աստուծ ալ քաղաքական բարդ խնդիրներու չի խառնուիր, որոնք, աշխարհը և մարդը ստեղծած միջոցին, իր ծրագրին մէջ բոլորովին գոյութիւն չունէին:

—) (—

պական ճաշակով տնակ:

Պարսկի ծառերը բոլորովին մերկ էին եւ ցցերի նման կանգնած, տան լուսամուտները առանց վարագոյրի: Երբ դրան հնչակը քաշեցի, դիմացս եկան երկու պատանիներ, զղզղված մազերով, սոճոյն. իսկոյն հասկացայ որ դրանք էջմիածնի ճեմարանից նոյն ձեւեր վտարված աշակերտները էին. անտէր, աղքատ, որոնք եկել էին իրենց սիրելի ուսուցչի, Վարանած թոշնիկի կտրտված, ջարդ ու փշուր եղած թեւերի տակ ապաստան գտնելու:

Իմ հարցին թէ՛ հայրուրբը կարող է ընդունել, նրանք պատասխանեցին. ոչ, որովհետեւ պատրաստվում է անից դուրս գալ:

— Յամենայն դէպս խնդրեմ յայտնեցէք որ այսինչը ուղում է ձեզ տեսնել, ասացի պատանիներին: Նրանցից աւելի ճարպիկը, որը, ինչպէս երևում էր, գիտ չէր ընկճվել բախտի ծանր հարւածից, իսկոյն վեր վաղցեց եւ ինձ ներս հրամցրեց մի առանձին գոհունակութեան ժպիտը երեսին:

Իսկոյն վեր բարձրացայ. ինձ մի մութ նախասենեակով առաջնորդեցին թոշնիկի սենեակը:

Սենեակ մտայ. դիմաւորեց մի սեւազգեստ, մուշտակով, շարժով փաթթված, միջահասակ նիհար, իր զգեստների մէջ բոլորովին անհե-

տացած, փոքրիկ գլխով, վառվառն սեւ փոքրիկ աչքերով երջաստարգ եւ հազիւ լսելի ձայնով ողջունելուց յետոյ. ձեռքս թոթվեց այնքան ուժով, որ քան ինքը կարող էր, ու ստաջարկեց նստել:

Այդ կենդանի կմախքը, վարանած թոշնիկն էր. ամբողջ մարմնով սարսուհի, երբ կայծակի արտաթրեամբ մտքովս անցաւ թէ՛ գէպի հայաստան քուրախին անգամ գուրթ ունեցող իրմեանը. այդ մարդին, որը նոյնիսկ եթէ ըմբատ եւ մի անարժան կուսակցուն լինէր, բայց մահուան տկարութիւնով էր բռնված, գուրս էր արել էջմիածնից, ուր անբարոյակտնութիւնը իր հրեշտային բոլոր ձեւերով թագաւորում է և որի հերոսները այնտեղ միշտ հանգիստ ապրում են:

Այդ կիսամեծ երիտասարդի վրաս թողած սուլաորութիւնը այնքան ճնշող էր, որ մի քանի վայրկեան բառ անգամ արտասանել չը կարողացայ:

Վերջապէս կմկմալով, եւ չը հաւատարկով որ թոշնիկը պէտք է իր այդ վիճակում կարողանայ գալ ժողովի. յայտնեցի իմ այցելութեան նպատակը:

— Այո, ես էլ պատրաստվում էի այնտեղ գալ. այսքան ուշանալուս պատճառը այն է որ, սարսուհիի հաղ բռնեց. ինչ էր միտում խնդրա-

թիւնների անդամները եւ մարմինները պէտք է աշխատեն իրենց զեկավարների կողմէն ձգտումները խեղդել:

— Անպատճառ պէտք է աշխատեն. որովհետեւ եթէ հիմա այդ միութիւնը չիրականացաւ յետոյ աւելի դժուար պէտք է լինի կրքերը պէտք է թագաւորեն. երկու կուսակցութիւններն էլ իրենց ժամանակի մեծ մասը պէտք է նւիրեն ներքին պայքարին, իրչնամուն պէտք է մոռանան:

— Կարող է թէ այդպէս լինել, եւ թէ ուրիշ կերպ. կուսակցութիւններից մէկն ու մէկը կը զօրանայ եւ բոլոր յեղափոխական ուժերը իր մէջ կը ձուլուեն:

— Յամենայն դէպս ներքին պայքարները պէտք է լինեն: Եւ այդ մեզ համար շատ միասակար է. շատ փորձանքներ կարող է բերել մեր գլխին, Հիմա դուք ո՞ր կուսակցութեան էք պատկանում:

— Առայժմ եւ ոչ մէկ:

— Է՛հ, լաւ: Գնանք, արգէն ու չէ:

Այս սանով թոշնիկը իր վեղարը դրեց, եւ մենք անից դուրս եկանք:

ՎԱՐԴՈ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Երուսաղէմի Սահակ եպիսկոպոս Խապայեանը, որ Կիլիկիոյ կաթողիկոսի ընտրութեան ժողովին պիտի նախագահէր, ընտրութեանց ձեւակերպութիւնը տակաւին վերջացած չըլլալուն պատճառով Երուսաղէմ վերագարձեր է:

— Կովկասէն կը հաղորդեն, Երեւանցի Տօքթ. Լեւոն Տրգրանեանի մամուլը վարչութեան արտօնուած է Երեւանի մէջ ուսուցչուով թերթ մը հանել, շարժել երեք անգամ, «Երեւանի յայտարարութիւններ» անունով:

— Կիմանանք թէ Կաթողիկոսը ձմեռը թիֆլիս պիտի անցունէ և գարնան սկիզբներն Քիշնէֆի և Աստրախանի թեմերը պիտի այցելէ:

— «Ս. Բեթերսպուրկի Վ. Կոմստի» լրագիրը կը հաղորդէ որ կաթողիկոսին Բեթերսպուրկ երթալու լուրը ճիշդ է, բայց անոր ժամանակով մը յետաձգուած է: Սակայն Էջմիածնայ հաւատարմագրի բներէն եկած տեղեկութիւններու համեմատ այդ մասին ոչինչ յայտնի չէ հոն:

— «Արեւելք» կը հաղորդէ թէ Պուլկարիոյ թաթար Բաղարճըրի եկեղեցւոյն քարոզիչ Գէորգ վրդ. նախպանտեան հրատարական շրկած է պատրիարքարան:

— «Նրեւելք» մէջ կը կարդանք թէ Խարբերդէն Ամերիկայ գաղթողներու թիւը հետզհետէ կ'աճի, և կրթական գործը շատ զէշ վիճակի մէջ է:

— Նոյն թերթէն կիմանանք թէ Տրպիզոնի դպրոցներն ալ ապահով վիճակ մը չունին, և տեղական հասարակութիւնը իր զէպի դպրոցը ունեցած պարտականութեանց մէջ կը թերանայ:

— Ռուսական հիւպատոսներու տոտած տեղեկութիւններու համեմատ հայերու վիճակը բոլորովին անտանելի է Թուրքիոյ հայկական նահանգներու մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Թուրք կառավարութիւնը Ամերիկայի պահանջները կատարած է Խարբերդի հիւպատոսութիւնը հաստատելով և Ամերիկեան Գրամֆը ընկերութեան 350000 ոսկի արժէքով յաճախուած մը պատուիրելով: Այս գումարին մէջ է նաեւ հայկական կոտորածներու ժամանակ ամերիկեան հպատակներու կրած վնասներուն հատուցումը:

— Հայոց Պատրիարքի և Ռուսաց դեսպանի գիմուսներուն վրայ, Բ. Գուռը հեռագրով հրամայած է Մուշի կառավարչին՝

Բարկէն վարդապետը ազատ արձակել:

— Ռուս դեսպանը Բ. Գուռէն կը պահանջէ առանձին դատական յանձնախումբ մը կազմել գաղտնի համար այն 20 քիւրաքերը որոնք անցեալ սեպտեմբերին յարձակում գործեցին Էրզրումի ուսուցչուսին վրայ:

— Նահանգներու և դաւաճներու բանտերը գտնուած այն դատապարտեալները, որոնք իրենց պատժներէն երրորդ մասը աւարտած են, ազատ պիտի արձակուին Սուլթանի ծննդեան տարեդարձի առթիւ:

— Սուլթանը Ամերիկայի հետ գործը անուշի կապելէն յետոյ, Իզմիրին սպառնացող զրահաւորին նաւապետը Պոլիս հրաւիրեց որ, Մէսաճըրի Սիտոն շոգենաւով անցեալ կիրակի Պոլիս հասեր է:

— Ռուստանի մէջ ալ պիտի գործադրուի գերեզմանութիւնը շինելու գրութիւնը, Ատոր համար նոր զօրագունք մը պիտի կազմուի և երեք նոր կայաններ պիտի հաստատուին:

Թուրքիան կը յառաջադիմէ կոր:

— Սուլթանական իւրաքանչիւր ծովային նախարարութեան հրամայուած է որ, Թուրքիոյ նաւային ուժը «նորոգայի նաւային տէրութեանց համահասարակ վիճակի մէջ գրուի»: Նոյնպէս հրամայուած է տեղեկագրել թէ արդէն յանձնարարուածներէն զատ տակաւին որքան յաճախակիներու պէտքը կայ:

Ինչպէս կ'երևի Սուլթանը իսկ շոր ոսկիի հանք մը գտեր է, կամ թէ ինքզինքը կը խորէ:

— Ռուսական երեք զրահաւորներ և երկու թորփրանուեր Հանիա հասեր են:

— Շէյխ իւլ իսլամի Գուռը Սուլթանի հրամանով իւլթաններ կընտրէ Բուսէլիի նահանգները շրկելու, մահմետական առնավուտներու մէջ ուսումն ու գիտութիւնը տարածելու համար:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Ժամանակէ մը ի վեր Պուլկարիոյ մէջ տիրող նախարարական տագնապը վերջապէս յանգեցաւ նախարարական փոփոխութեան: Ռատոսլավովի հրամարած է, Սոպրանիէի նիստերը յետաձգուած են ժամանակի մը համար, ու նոր կառավարութիւնը կազմուած է հետեւեալ օկերպով:

Տ. Տ. Իվանչով՝ նախարարապետ և ելեւմտական նախարար, Թօնչէվ՝ արտաքին գործոց, Բէթրով՝ ներքին գործոց, Բարրիքով՝ պատերազմական և հանրային շինութեան, Թիթօրով՝ վաճառականական և երկրագործական, Թանչէվ՝ դատաստանական գործոց նախարար:

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Ս Ա Ն

«Թայմզ»-ի Բեթերսպուրկի թղթակիրը կը հաղորդէ որ ուսուցչուսականութիւնը սրտշած է Պարսկաստանի խել մը քաղաքներու մէջ հիւպատարաններ հաստատելու արամագրութիւն ունի նաեւ Թէհրանի մէջ գտնուած քաղաքներու գունդի թիւը կրկնապատկել:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Ռուսիոյ Չարին հիւանդութեան վտանգը անցած է. կըսուի թէ իր առողջութիւնը բոլորովին վերականգնելու համար հարաւային Պրանսա պիտի մեկնի, սակայն կառավարութիւնը յայտարարած է թէ ինք չի կրնար երաշխաւորել Չարին ապահովութիւնը:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Հօլանտայի նախարարապետը երեսփոխանական ժողովին մէջ յայտարարած է թէ ներկայիս մէջ հանգամանքները անյաջող ըլլալուն պատճառաւ, յարմար չի գտներ միջամտել Հարաւային Աֆրիկէի գործերուն:

— Իրէթօրիայէն կը հաղորդեն թէ Էրազմուս և Վէլիկէն Պօէր զօրավարները անգլիացիներէն պաշարուած են:

— Քրիկէր Թրանսվալէն հեռացած ատեն հետն առեր է 10 միլիօն անգլիական ոսկի, հանրապետութեան վերահաստատման գործին յատկացնելու գիտաւորութեամբ:

— Օրանթի նոխագահ Շիթայն վիրաւորուեր է Գնօքս ժէնէրալի հետ ունեցած կռուոյ մը մէջ:

— Քրիկէր Լահէ հասնելով աննկարագրելի խանդավառութեամբ մը ընդունուեր է, ժամանումէն ետքը կառավարութեան բոլոր անդամները այցելութիւններ տուեր են Քրիկէրի:

— Թրանսվալի ներկայացուցիչը Տօք. Լէյտս Լիվաթիա ուղևորած է Քրիկէրին Չարին հետ ունենալիք անսակցութեան խնդիրը կարգադրելու համար:

— Պօէրները Պրֆէլարօսթի մէջ այրեր են անգլիական պաշարները:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Գեկտ. 6ին (Ը. Ե.) Բէքինէն Բարիզ կը հեռագրեն թէ՛ գեսպանները վերջապէս համաձայնած են Ֆրանսայի ու Մ. Նահանգներու կողմէ եղած առաջարկութիւններու:

— Ուաշինկթընէն կը հեռագրեն թէ արտաքին գործոց նախարարը Բէքինի Ամերիկեան դեսպանին արտօներ է ստորագրել Բէքինի օտար դեսպաններուն միջեւ գոյացած համաձայնութիւնը, ուր կան նաեւ յանձնարներուն ծանր պատիժներ տալու և Չինաստանէն տուգանք պահանջելու պայմանները:

Չինաստանի կառավարութեան

տրուելիք պատիժը ամենէն խիստը պիտի ըլլայ. Չինաստան ստիպուած է ընդունիլ հատուցումներու առաջարկը:

— Ամերիկեան բոլոր զինուորները բացի Բէքինի դեսպանատան Պահանջներէն, Չինաստանէն ճամբայ ելած են դէպի Ֆիլիպպինները:

— Գերմանական ու Ֆրանսական զօրավարները, Վալաէրդէի հաւանութեամբ Բէքինի պարիսպներու վրայէն վերցուցեր են աստղաշարական այն հոյակապ գործիքները, զորս շինած են ճիզուրի կրօնաւորները, և որոնք երջու տարիէ ի վեր Բէքինի գլխաւոր փառքերէն մին կը կազմէին:

Այդ երկու հեռագրիտակները այնչափ զեղեցիկ էին որ Չինացիները օտարականներու վերաբերելու ամէն բան քանդելով հանդերձ, այդ գործիքներուն բնաւ չի դպան:

Այդ հեռագրիտակներէն մին Պերլին պիտի զրկուի միւսն ալ Բարիզ:

— Թիէնձինի «առժամեայ վարչութիւնը» մահուան սպառնալիքի յայտարարութեամբ մը քաղաքի մէջ և շրջակաները պէնք պահելը արգելած է:

— Թիէնձինի մէջ երկու չինացիներ փորձած են զինարանը հրդեհել, սակայն չեն յաջողած և չինացիներէն մին սպաննուած է:

— Շանսիի նոր կառավարիչը պօքօէրներու ու թսուս պետեր սպաննել տուած է:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսայի երեսփոխանական ժողովը ընդունել է ընդհանուր ներման ծրագիրը:

— Իտալիոյ մէջ տեղացած սաստիկ անձրեւներու պատճառաւ Տրիբրիս գետը չափազանց յորդեր և Հոմի մեծ վնասներ պատճառեր է:

— Պապը կրկին հիւանդ է:

ՉՈՒԼՄԱՆ „ԿՈՒԹԵՆՊԵՐԿ“
(Տպագրական տառերու)

Կարճը մետաղ . Ողիղ կարգ
Հաշտար քարձորքիս

Ամէն լեզուէ տպագրական տառեր
և զանազանք՝ գոհացուցիչ գներով:

Հասցէ՝

Fonderie typographique, Gutenberg,
Sophia, Rue Graff Jgnatieff № 3.